Արձանագրություն N3

«Մարտունու Ծննդատուն» ՊՓԲԸ կարիքների համար ՄԾՊՓԲԸ-ԷԱՃԱՊՁԲ-26/01 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի մասին

ք. Մարտունի **09.01.2026թ.**

Նախագահ՝ Դեղագործ Սիրարփի Հովհաննիսյան

Անդամներ՝

Կ/Կ վարիչ Աշոտ Հովհաննիսյան

Կ/կ մանկ. Օֆելյա Մելքոնյան

Քարտուղար՝ Հակոբ Ալեքսանյան

1.Բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմանների համապատասխանության և նիստի կասեցման մասին .

ՄԾՊՓԲԸ-ԷԱՃԱՊՁԲ-26/01 ծածկագրով գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրում տեղ գտած անհամապատասխանությունը, որը առկա էր Տելի-Մեդ ՓԲԸ- ի մոտ, մասնակիցը նշված օրը և ժամին ներկայացրեց համապատասխան փաստաթղթերը: Հանձնաժողովը գնահատեց պահանջվող փաստաթղթերի առկայությունը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը պարզվել է, որ Տելիա-Մեդ ՓԲԸ-ի կողմից ներկայացված 1-ին չափաբաժնի շտկված նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական պահանջներին, մասնավորապես չեն համապատասխանում պահանջված տվիչների հաճախականության տիրույթները ինչի արդյունքում ներկայացված հայտը գնահատվեց անբավարար և ենթակա է մերժման /հրավերի 8-ի 11-րդ կետով/:Միաժամանակ հայտնում ենք, որ ուլտրաձայնային սկաների և հրավերով պահանջված մասնագիտական խորացված հետազոտությունները լիարժեք և որակյալ իրականացնելու համար կիրառվող տվիչները, հատկապես դրանց տեխնիկական բնութագրերը (մասնավորապես՝ էլեմենտների քանակը, հաճախականության տիրույթները և սկանավորման անկյունները), հանդիսանում են սարքի աշխատանքի և հետազոտությունների արդյունքների որակի կարևորագույն և որոշիչ բաղադրիչներ:

Հետևաբար, տվյալ պահանջներից ցանկացած շեղում համարվում է էական անհամապատասխանություն և չի կարող գնահատվել որպես աննշան կամ ընդունելի տարբերակ:

Մասնավորապես արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

1. Գծային տվիչ

Հրավերով պահանջված է՝ հաճախականության տիրույթ՝ ոչ պակաս քան 5–18 ՄՀց,

Ձեր առաջարկած L741 գծային տվիչի հաճախականության տիրույթը 4–16 ՄՀց է, ինչը չի բավարարում հրավերով սահմանված ոչ պակաս քան 5–18 ՄՀց պահանջին:

2. Ներխոռոչային տվիչ
Հրավերով պահանջված է հաճախականության տիրույթ՝ ոչ պակաս քան 2–10 ՄՀց, Ձեր առաջարկած 6CI-A տվիչի հաճախականության տիրույթը 3–15 ՄՀց է, ինչը չի համապատասխանում հրավերով պահանջված 2–10 ՄՀց միջակայքին:
3. Ծավալային կոնվեքս տվիչ
Հրավերով պահանջված է հաճախականության տիրույթ՝ ոչ պակաս քան 1–8 ՄՀց, Ձեր առաջարկած VC6-2 ծավալային տվիչի հաճախականության տիրույթը կազմում է 2–7 ՄՀց, որը չի բավարարում հրավերով սահմանված ոչ պակաս քան 1–8 ՄՀց պահանջին:
Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

2.<<Մարտունու Ծննդատուն>> ՊՓԲԸ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար ստացիոնար ուլտրաձայնային ասրքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՄԾՊՓԲԸ-ԷԱՃԱՊՁԲ-26/01 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին տեղեկատվությունը՝

Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգի 1-ին չափաբաժինը չկայացած է հայտարարում, քանի որ ոչ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին

3. Անգործության ժամկետը հաստատելու մասին

- Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները՝ հրապարակել հայտարարություն ՄԾՊՓԲԸ-ԷԱՃԱՊՁԲ-26/01 ծածկագրով, անգործության ժամկետ սահմանելով սույն հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Սիրարփի Հովհաննիսյան _____

Աշոտ Հովհաննիսյան _____

Օֆելյա Մելքոնյան _____

Քարտուղար՝ Հակոբ Ալեքսանյան _____